

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ
ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ**

01 հունվարի – 31 դեկտեմբերի 2018թ.

ԵՐԵՎԱՆ 2019 թ.

22 Hanrapetutyanyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.com

23.10.2019թ.
N 031905/1



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Վերլուծության Գլխավոր տնօրեն» ՓԲԸ

Փ. Գևորգյան

Առողջապահության մատայությունների իրականացման
լիցենզիայի № ԱՌ-054՝ տրված ՀՀ ֆինանսների
և եկամտիկալի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Հանրային
Հեռուստատառադիոընկերության» խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի լուսարանում

Ընկերության 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2018 թվականի մայիսի 23-ին տրված եզրակացությամբ արտահայտել է ձևափոխված կարծիք:

Այլ հանգամանք – աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն

Ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կողմից 02.04.2019թ.-ին տրամադրվել էր կարծիք՝ առանց վերապահման: Կից ներկայացված հաշվետվությունները ներառում են ընկերության ղեկավարության կողմից այդ հրապարակված ֆինանսական հաշվետվություններում շտկումներ, որոնք չեն ազդել մեր կողմից արտահայտված կարծիքի վրա:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք գերե են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունները օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

▪ Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հնկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

▪ Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Հնկերությունը կկորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

▪ Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

▪ Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ Հնկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր
Լ. Ղոնոյան



23.10.2019թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2018թ-ի դրությամբ

	Շանթ.	2018թ.	(հազար դրամ) 2017թ.
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	3,457,009	3,308,134
Ոչ նյութական ակտիվներ	5	42,068	19,417
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	94,167	270,000
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար		60	9,113
<i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i>		<u>3,593,304</u>	<u>3,606,664</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	9,422	9,124
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	174,524	47,249
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	461	9,181
Ժամկետային ավանդներ	9	-	30,000
<i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i>		<u>184,407</u>	<u>95,554</u>
Ընդամենը ակտիվներ		<u>3,777,711</u>	<u>3,702,218</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	10	1,466,508	1,466,508
Վերագնահատման պահուստ		946,908	946,908
Ընդհանուր պահուստ		63,703	63,703
Կուտակված շահույթ		611,691	661,614
<i>Ընդամենը սեփական կապիտալ</i>		<u>3,088,810</u>	<u>3,138,733</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	170,872	182,564
Բանկային վարկեր	12	126,561	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	219,872	254,790
<i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		<u>517,305</u>	<u>437,354</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր	12	88,163	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	83,433	87,130
Ընթացիկ հարկային պարտավորություններ		-	39,001
<i>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</i>		<u>171,596</u>	<u>126,131</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>3,777,711</u>	<u>3,702,218</u>

Գարեգին Խումարյան

Գործադիր տնօրեն

23.10.2019թ.

Մոֆյա Մալիյան

Գլխավոր հաշվապահ



ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՑՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2018թ. ավարտված տարվա համար

	Ծանոթ.	2018թ.	(հազար դրամ) 2017թ.
Գովազդային հատված		33,047	36,124
Դրամաշնորհներից եկամուտ	15	663,612	804,207
Վարձակալությունից եկամուտ		34,057	32,514
Այլ եկամուտներ	16	69,575	57,612
Հեռարձակման ծախսեր		(119,035)	(117,786)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(527,025)	(530,903)
Ռադիոհաղորդումների պատրաստում		(50,895)	(49,420)
Մաշվածություն և ամորտիզացիա		(122,898)	(104,393)
Այլ ծախսեր	17	(62,929)	(255,399)
Գործառնական գործունեությունից վնաս		(82,491)	(127,444)
Ֆինանսական եկամուտ	18	555	414
Ֆինանսական ծախս	18	(2,975)	(3,821)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		70	(164)
Շահույթ/(Վնաս) մինչև հարկումը		(84,841)	(131,015)
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	19	34,918	(81,270)
Տարվա շահույթ/(վնաս)		(49,923)	(212,285)
<i>Այլ համապարփակ արդյունք</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(49,923)	(212,285)

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Բաժնետիրական կապիտալ	Զգրանցված կապիտալ	Վերագնահատման պահուստ	Ընդհանուր պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	391,915	1,074,593	1,052,052	63,703	768,755	3,351,018
Համապարփակ արդյունք						
Տարվա վնաս	-	-	-	-	(212,285)	(212,285)
Ընդամենը համապարփակ արդյունք	-	-	-	-	(212,285)	(212,285)
Փոխանցում չբաղիված շահույթին	-	-	(105,144)	-	105,144	-
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Բաժնետիրական կապիտալի համալրում	1,074,593	(1,074,593)	-	-	-	-
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	1,074,593	(1,074,593)	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	1,466,508	-	946,908	63,703	661,614	3,138,733
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	1,466,508	-	946,908	63,703	661,614	3,138,733
Տարվա վնաս	-	-	-	-	(49,923)	(49,923)
Ընդամենը համապարփակ արդյունք	-	-	-	-	(49,923)	(49,923)
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	1,466,508	-	946,908	63,703	611,961	3,088,810

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2018թ.	(հազար դրամ) 2017թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահոյթ/(վնաս)	(49,923)	(212,285)
Ճշգրտումներ		
Մաշվածության, ամորտիզացիայի ծախս	124,354	104,393
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	(1,234)	(2,521)
Շնորհից եկամուտ	(663,612)	(804,207)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(70)	164
Տոկոսային եկամուտ	(555)	(414)
Տոկոսային ծախս	9,989	3,821
Շահութահարկի գծով (փոխհատուցում)/ծախս	(34,918)	81,270
Դրամական միջոցների հոսքեր մինչ շրջանառու կապիտալի փոփոխություններ	(615,969)	(829,779)
Պաշարների նվազում/(աճ)	(298)	(5,366)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (աճ)/նվազում	57,618	99,011
Վաճառքի համար պահվող ակտիվների շարժ	-	238,028
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի (նվազում)/աճ	(3,698)	4,814
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր նախքան շահութահարկի վճարումը	(562,347)	(493,292)
Ստասված շնորհներ, գուտ	651,920	857,804
Վճարված շահութահարկ	(39,001)	(2,970)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	50,572	361,542
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(298,096)	(248,808)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	3,450	4,890
Ստացված տոկոսներ	555	414
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	(294,091)	(243,504)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների ստացում/(մարում), գուտ	213,697	(75,331)
Տոկոսների վճարում	(8,963)	(3,821)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	204,734	(79,152)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/ (նվազում)	(38,785)	38,886
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	65	11
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	39,181	284
Տարեվերջի դրությամբ դրամական միջոցները և նրանց համարժեքները	461	39,181